ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ — ՌԱԶՄԻԿՆԵՐԻՆ

ԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵ՛Ր.

Արյունահեղ ճակատամարտերում նվաճված փայլուն հաղթանակների անթառամ փառքով պսակեց իր դրոշները հերոսական Կարմիր Բանակն անցած 1943 թվականին։

Մենք հավատացած ենք, որ նոր՝ 1944 թիվը կլինի հաղթական սովետական զենքի չտեսնված փառքի ու հաղթանակի տարի։

Հայ ռազմիկներ, սպաներ և գեներալներ, մենք սպասում ենք, որ դուք մեր եղբայրների՝ ռուսների, ուկրաինացիների հետ միասին, Սովետական Միության բոլոր ժողովուրդների զավակների հետ միասին, չեք խնայի ձեր ուժերը թշնամուն ջախջախելու համար, և Գերագույն Գլխավոր Հրամանատար՝ Սովետական Միության Մարշալ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի ղեկավարությամբ մենք կհասնենք մեր վերջնական հաղթանակին։

Թող ուրեմն 1944 թվականը դառնա պատերազմի վերջին տարին, հիտլերականների վերջնական ջախջախման տարին։

Մենք, Սովետական Հայաստանի գիտնականներս, որտեղ վերջերս ստեղծվեց Գիտությունների Ակադեմիա, որն ազատասեր հայ ժողովրդի գիտական մտքի շտաբն է հանդիսանում,—կգործադրենք մեր բոլոր ջանքերը, գիտելիքներն ու փորձը, որպեսզի գիտության բոլոր նվաճումներն օգտագործենք մեր Հայրենիքի պաշտպանությունն ամրապնդելու, մեր Կարմիր Բանակն ուժեղացնելու համար։

Շնորհավորում ենք ձեր նոր տարին, հայ ժողովրդի քաջարի զավակներ, և ցանկանում ենք ձեզ նորանոր մարտական հաջողություններ՝ ի փառս մեր մեծ Հայրենիքի—Սովետական Միության։

Ակադեմիկներ՝ Ի. Ա. ՕՐԲԵԼԻ,
Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Վ. Հ. ԻՍԱԳՈՒԼՅԱՆ, Մ. Գ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, Վ. Հ. ԳՈՒԼՔԱՆՅԱՆ։

ԵՐԵՎԱՆԻՆ